Armenian Cilicia Evangelical Church in Pasadena, CA; AMAA Board Member Rev. Ara Guekguezian preached at the Armenian Evangelical Church of Hollywood and Board Member Dr. Raffi Balabanian preached at the Armenian Church of the Nazarene in Glendale, CA.

The celebrations went on during the rest of the month with AMAA President Dr. H. Steven Aharonian's participation at the missions luncheon at UACC on Sunday, March 11th. The Field Director visited other churches and fellowships including the Armenian Christian Fellowship of Thousand Oaks, CA on Tuesday, March 7; Pilgrim Armenian Congregational Church



Mr. Greg Karamanoulian and the youth of the First Armenian Evangelical Church of Montreal

East and at home. Over the years the ministries were expanded to other countries around the world and to the newly independent Republic of Armenia. Today AMAA supports 140 different projects in 22 countries.

The mission and service ministries of the AMAA are made possible through the grace of God, the gifts of caring individuals, and the support of churches and affiliated organizations.

To renew and to fulfill their commitment, during the month of March, Armenian evangelicals praise God for the AMAA, pray for God's guidance and ask that God will bless this unique ministry and use it to demonstrate the reality of His great love.

In March of 2007 Armenian Evangelical churches in North America participated in this celebration, with great enthusiasm. The Board of Directors of the AMAA at its last meeting made commitments for major projects in Armenia, Middle East, Europe and North America. AMAA Board Members, staff, chapters and volunteers were all geared up to update the congregations on the new activities.

On Sunday, March 4 AMAA Board Members and staff visited churches on the West Coast. AMAA Executive Director Andrew Torigian participated in the worship service and special program at the Immanuel Armenian Congregational Church in Downey, CA. Field Director Dikran Youmshakian preached at the United Armenian Congregational Church (UACC) of Los Angeles; Vice President Peter Kougasian preached at the

of Fresno on March 12; First Armenian Evangelical Church of Montreal on Sunday, March 25 and the First Armenian Church of Belmont, MA on Sunday, April 1.

This year's celebrations were enhanced with the participation of the children and the youth in various churches. Their involvement was crucial and encouraging to assure the continuation of AMAA services.

AMAA month was also observed in other countries around the world including Australia, where on Sunday, March 11, the worship service at the Armenian Evangelical Church of Sydney, Australia, was dedicated to the AMAA. Following the service AMAA organized a banquet. 90 people were present. Following a video presentation, Mrs. Araksi Soghomonian made an appeal for child sponsorship. These celebrations and the moral and financial commitments made on behalf of AMAA members and friends will touch the lives of many disadvantaged people around the world. Through their participation and support, the Christian witness and stewardship will be felt in areas around the world where AMAA is active and supports churches, schools, universities, orphanages, old age homes, medical clinics, social service centers, summer camps, child education and sponsorship programs.

The gifts received during these celebrations combined with love will multiply and help AMAA meet its current budget of six million dollars to support current projects and help undertake new projects.

**Express your opinion
 send your letters to Massis Weekly**

ՄԻ ԲԱՑ ՆԱՍԱԿ ՊՐԵ. ՌԱԶԱՔ ԷՐՏՈՂԱՆ՝ ԹՈՒՐՔԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ

ԱՐԱ ՍԱՐԳՍԵԱՆ ՊԱՐՄԿԵՐԼԵՆՔԹԱՐԳՄԱՆԵՑ ՆՈՒԱՐԴ ԶԱՐԳԱՐԵԱՆ

Յարգանօք՝ ստորելիս ստորագ-
րողը մի տարեց հայ է՝ որը ժառան-
գորդն է մի ազգի՝ որը ունի մատե-
նաբրուած պատմութիւն, առաջա-
դէմ մշակոյթ։ Նրա այբուբենը դա-
րեր շարունակ նրա լեզուին եւ
խօսքին գեղեցկութիւնն ու հարստու-
թիւնն է պարզեւել՝ որը մինչ օրս իր
խօսակցական եւ գրական ամրակուռ
լեզուն է։

Մի ժողովրդի ժառանգործն
եմ որը Քրիստովի առաջին հաւա-
տացեալներից է ուստի եւ առաջին
քրիստոնեայ ազգն ու պնտութիւնը,
301 թուից:

Եւ վերջապէս մի ժողովրդի
ժառանգն եմ, որ Արարատի ճերմակ
Ճիւնածածկ զորդ գագաթները հան-
դիսանում են նրա անալրատ հոգու
եւ մաքուր խղճի խորհրդանիշը:

Արարատի (որը Աղբիդաղ է անուանուել) բարձր գագաթը ոչ միայն Արմէնների պահապանն է այլ Նոյան Տապանի, Նոյ Նահապետի ու Աստծու արարած ու առեղծած մարդու անասունի (ժողովն, սողուն ու արածող) ապաստանարանն է Եղել, մինչեւ ջրէնեղի ջրերը ցամաքեն ու կեանքը վերակսի երկրի վրաց՝ ըստ Թալմուդի, Աւետարանի եւ Ղուրանի, (դուք եւս գիտէք եւ հաւատում էք) եւ երբ Նոյը ոտք դրեց ցամաքած գետնի վրաց, հրամայեց դուրս գալ Տապանից եւ համնելով Արարատի փէշերին իշեւանեցին, եւ այդ տեղը անուանուեց՝ Նախիջեւան որը այժմ էլ այդպէս է անուանում, որը անխիլճ զաւթիչ-ները բռնի ուժով այդտեղ դարերով հաստատուած բնիկ հայ ժողովրդին տեղահան անելով, չինայիցին ընածն-ջել նաեւ պատմական վկացութիւններն ու հետքերը՝ խաչքարերն ու գերեզմանաքարերը ջարդեցին 21րդ դարում, հողին հաւասարեցրին որ ոչ մի հետք ու փաստ չմնայ:

ՊՐՈ. Վարչապետ թոյլ տուէք

Նախիջեւան այս յատուկ անունն էլ ձեզ համար տարրալուծեմ որ հետաքրքիր ճշմարտութիւնը երեւան գայ: «Նախ»ը հայերէնով այսինքն առաջին (նախկին), «իջե» նշանակում է իջիր, վան այսինքն հանգրուան, տեղ կամ տուն: Ուրեմն այդ երեք հայերէն բառարձատներից կազմուած այս բարդ բառը (անունը) նշանակում է առաջին տեղը որ ճամբորդներն ու արարածները Նոյեան հրամանով ջրհեղեղից յետոյ ոտք դրին երկրի վրայ եւ կեանքը վերսկստեց: Ու Նախիջեւան հնագոյն պատմական անունը մնաց մինչօրս: Ուրեմն պարզուեց որ ի՞նչ հինգ ժողովրդի ժառանգ եմ: Նախքան

Ճեր բարձրեալ նախապապի դարեր
յետոյ հեռաւոր Ասիայից դէպի Մի-
ջին Արեւելք քոչելը, մենք իրանի,
Հոռմի եւ Ցունաստանի ասհմանս-
կից էինք: Եւ այսօր հին Օամանեան
մեծ կայսրութեան եւ այժմեան փոքր
Թուրքիաի տարբեր հողամասե-
րում եթէ ուշադիր լինէք անպայման
պատմական փաստեր՝ հայերէն գրե-
րի, մշակութային, արուեստի, կեն-
ցալային, բերդանման կառուցների
եւ հոյակապ եկեղեցիների բազում
հետքեր կը տեսնէք ամէնուրեք, որ
իմ պապերիս ձեռակերտն է, որտեղ
ապրել եւ հողին են յանձնուել:
Յետոյ եօթ դար առաջ ձեր ցեղ ու
ազգի հետ ենք ծանօթացել: Որտե՞-
ղից եւ ինչպէս են եկել, ի՞նչով են

զբաղութել։ Տարիներ արիսնայեղութիւնից, քանդելուց ու թալանելուց յետոյ հաստատուեցին այս հողամասում, շնորհաւոր լինի։ Յետոյ Աստծու եւ իւլամի անունով եւ Հուրանի շարադրութեամբ, բնիկներին ապաննեցին, տանձեցին որ թը քանան, բայց չթրքացան։ Մինչդեռ ոչ բոլորին ատեղծող Մեծ Ասուածը, ոչ էլ Հուրանը այսպիսի հրահանգ չեն տուել։ Թողնենք եւ անցնենք բուն թեմային։ Մէկ դար առաջ Օամանեան խալիքայութեան օրօք Ապտիւլ Համիտ՝ «Կարմիր Սուլլիանը» եւ 92 տարի առաջ Երիտ-Թուրքերի իշխանութեան ժամանակաշրջանում ձեռնարկուեց հայ ազգի բնաջնջումը հենց իրենց բնորդանում։ Գտեսնուած ու չլոււած ոճրագործութիւնն տեղի ունեցաւ, որ ձեր իսկ կարավարութեան որոշ պատասխանատուներ եւ օտար պետութիւնների դեսպատների պաշտօնեաներ այս ջարդն ու բնաջնջումը քանաներորդ դարի առաջին ցեղասպանութիւնը անուանեցին, որը պատմութեան մէջ այդպէս էլ արձանագրուեց։ Ձեր եւ օտար գերիշխան երկրների՝ Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան եւ Ամերիկայի արխիւներում էլ գոյութիւն ունեն նման արձանագրութիւններ, որը քաղաքական եւ այլ պատճառներով երկաթեայ պահարաններում են պահուած։ Վատահաբար մի օր երբ այդ երկաթէ պահարանները փատեն կամ այդ երկրների քնած խիղճը արթնանայ այս բոլոր յանցագործութիւնները երեւան կը զան, մի իսօսքով առանց դրան էլ թէ դուք եւ թէ բոլոր երկիրները իրականութիւնը լաւ գիտէք բայց որոշակի նկատառումներով առայժմ լուսում էք։ Դէ իշարէ արեւը երբեք ամպի տակ չի մնայ։

Պրն. Էրտողան ես մէկն եմ այն բազում ժատանգներից որ դեռեւս պապերիս սպակիրն եմ, նրանց՝ որոնց ձեր նախկին իշխանութիւնները սպաննեցին, այրեցին, կենդանի-կենդանի թաղեցին եւ երբ հասաց գիտակցութեան եւ ըջբոնեցի, դառը ճշմարտութիւնը եւ գործուած ոճրագործութիւնները մեր պապերի հանդէպ, սկսեց պայքար ձեր գժիխեմ պետութեան վարչակարգի դէմ գրչով, պարզաբանող յօդուածներով եւ այսօր որ արդէն առաջացած տարիքում եմ, դեռ եռանդով շարունակում եմ, գուցէ ես վաղը չլինեմ, բայց լաւ իմացէք՝ գտակ-ներս ու թոռներս եւ նրանց յաջորդները սերունդէ սերունդ մինչեւ մեր չարչարուած եւ իրաւագրկուած ազգի կորսուած իրաւունքների ձեռքքերումը, մինչեւ վերջնական յաղթանակ, այս սուրբ պայքարի առաջատար շարքերում են լինելու։

Պրն. Էրտողան չեմ ուզում Օամանեան խալիքանների պատմութիւնը գրեմ եւ կրկնեմ թէ որտեղից եւ ինչպէս են եկել ու մեր երկրում իշխանութեան հասել, ինչպէս գրաւեցին կոստանդնուպոլիսը։ Վեց-եօթը դար պատմութեան ուստումնասիրութիւնը թողնենք մասնագչով պատմաբաններին, (որը որոշակի կատարուել է), ես այսօրուայ ձեր քաղաքականութիւնն եմ քննադատում։ Այսօր դուք մի երկրամաս էք կառավարում որի անցեալի վարչակարգի պատմութիւնը լաւ գիտէք, որի գլուխ գործոցներից մասնաւոր յուշեր նշուած են հետեւեալ գրքերում։ «Ոսկէ եղջիւրի հրամանատարները», «Վերջին Սուլլիանը»,

Եւ «Նախմքէկի Յուշերը» եւ էլ ուրիշ
պատմաբաններ գրել են թէ ինչպէս
Օսմաննեան կայրութիւնը ատեղծ-
ուեց, ինչպէս իրենց Աստծու ներկա-
յացուցիչ եւ անզամ Աստուած են
ներկայացրել:

Խալիքաններն ու Սուլթանները
ունքի թեթեւ շարժումով խումբ-
խումբ մարդկանց հանդերձեալ աշ-
խարհ էին ուղարկում, մինչեւ ան-
զամ գահաժամանգներն էլ ցաւալի-
վիճակ են ունեցել որի բացատրու-
թիւնը ցաւոք անյարիր է: Վերջի-
վերջոյ այդ նեխած վարչակարգը
երկար չդիմացաւ, շուրջ 100 տարիի
առաջ փլուզուեց եւ բազում բռնագ-
րաւուած երկիրներ ազատագրուե-
ցին որոնք հիմա ձեր հարեւանու-
թեան մէջ են՝ իրաքը, Սուրիան,
Պալքանեան թերակղզու երկիրնե-
րը: Նրանց տարանջատման պատ-
ճառը ինչպէս գիտէք՝ գերութերի
շահերի օպտին այդ կառուցը պիտի
փլուէք: Մնացած մասում Երիտ-
թուրքերի իշխանութեան տակ 92
տարի առաջ ամօթալի եւ ցաւալի-
ոնքագործութեամբ ձեռնարկուեց
Հայոց Յեղասպանութիւնը: Հայե-
րին ուրոյն ազգ չէին համարում այլ
նրանց հպատակներ էին համարում:
Նրանց սպաննեցին, այրեցին, թալա-
նեցին եւ այդ նոր ազատագրուած
երկրների անապատներում բնաջն-
ջեցին մէկ ու կէս միլիոն հայ: Աստծոյ հպատակներին, այն Աստծոյը
որ դուք Ալլահ էք կոչում: Պրան.
Էրտողան միթէ տիեզերքի ողջ էու-
թեան մէջ քանի՛ Աստուած կազ:
Կա՞յ արդեօք ուրիշ Աստուած, ոչ,
Աստուած մէկ է եւ ինչ որ կայ նրա
ստեղծածն է: Ուրեմն ինչո՞ւ պիտք
է քո ազգը իմ ազգից աւելի սիրելի
լինի Արարչի համար:

Պրն. Էրտողան ցաւօք Աթա-
թուրքի՝ Եւրոպայում ապրած, Եւ-
րոպա տեսած, առաջադիմ մարդու-
իշխանութեան օրօք եւս, Երկրոր-
դական քաղաքացի համարուող լոյ-
ների, քրիստոնեայ չերքեզների, հա-
յերի եւ բոլոր ոչ մահմետականների
հանդէպ՝ յատուկ քաղաքականու-

թեամբ՝ աւելորդ ու ծանր տուրքեցիվ, այսան-թալան ու կրտորածով էին վերաբերում եւ ամէնից շատ այլ հարստահարումը յատկապէս հայերի իմ ու մեր պապերի հանդէպ, այն վստահութեամբ որ առա-

ջին համաշխարհային պատերազմի
արհաւիրքում եւ ամբողջ աշխարհի
մարդկութեան ստագնապալի դժուա-
րութեան մէջ այդ ոճրագործու-
թիւնը չի բացաբացուի: Ճիշտ է
ոճրագործները անպատիթ մնացին,
բայց ստորագաս փաշաների լո-
գունգները որ յոխորտացել էին թէ
երկրի վրաց միայն մի հայ պէտք է
մնայ այն էլ արձանը թան զարանում
փառք Աստծուն որ չիրականացաւ՝
կանք, կը մնանք, եւ կը շատանանք:
ՊԵ՞ն. վարչապետ այս նամակը

յատկապէս ձեզ եմ ուղղում որպէսսպի
զոհուածներից մեզ պահ մնացած
խօսքերն ու լոգունգները յատկապէս
ձեր օրօք դատաղբաբար նահատակ-
ուած, անզուգական հերոս, մեծ մարդ՝
Հրանդ Տինքի մարդասիրական
մտքերին ու խօսքերին միանալով,
միասնաբար ընդունենք որ մեր
պարտքն է 21րդ դարում թուրք
ազատամիտ ժողովրդի վրդովուած
ու ջախջախուած հոգիներին նոր
կեանք պարզեւենք եւ արթնացնենք
նրանց գիտակցութիւնը՝ որ բռնա-
կալ իշխանութիւնները ինչ ծանր
ոճրագործութիւնն են գործել հայերի
հանդէպ եւ պէտք է փոխհատուցում
լինի, հայ նահատակներից եւ ժա-
ռանգորդներից ներում հայցելով,
զաւթուած՝ ունեցուածքն ու հողերը
տէրերին վերադարձուի, ինչպէս գեր-
մանացի պէտութիւնները ոճրագործ
չիթերի իշխանութիւնից յետոյ
հրեաներից ներողութիւն իննդրեցին
եւ փոխհատուցում եղաւ: Հայ նահա-
տակներից վերածնուած փիւնիկ
Հրանդ Տինքը պայքարի նորագոյն
ռազմավարութիւնն ներշնչեց հայ
ազգին եւ ես նրա հետեւորդներից
մէկն եմ եւ ցանկանում եմ դուք բաց
մտքով եւ սրտով այն ինչ որ ուզում

Topic 17



PRESENTS

ELON

Live in concert
FRIDAY JUNE 1
WITH ABSTRACT3

TICKETS 818 808 8222
818 265 0506
GLEN OAKS VIDEO
CHATERIAN WORLD MUSIC
WWW.ARTISTSFORKIDS.US




ԳԱՐԴՈՒ

»Իրականութիւնը հարուստ է, եւ այնտեղ ամէն մի իր ինձ թւում է լուսաւորուած է խորհրդաւոր մի փայլով: Կը ցանկանայի քանդակել իրերում թաքնուած դիւթանքը, ինձ շարունակ հետապնդում է իրականի ու երազի գուգորդումը«:

ԳԱՐԴՈՒ

ՄԱՐԻՆԵԼ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՒՀԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ)



Ֆրանսահայց հանրայիշտ նկարիչ Գառզուն (Գառնիկ Յարութիւնի ջուլումեան) ծնուել է Սիրիայի Հալէպ քաղաքում՝ Տիգրանակերտից գաղթած Յարութիւն Ջուլումեանի ընտանիքում։ Նախնական կրթութիւնը ստացել է տեղում, ապա հօր մահից յետոյ, 1919 թ. ընտանիքով Գահիրէ տեղափոխուելուց յետոյ՝ Գալուստեան վարժարանում, այնուհետեւ՝ Ֆրամսական լիսէյում։

1924 թ. որպէս «Եղիսաբեն
թոշակառու սան» նա փոխադրուել
է Ֆրանսա եւ Փարիզում ուսանել
ճարտարապետութիւն, միաժամա-
նակ յաճախելով «Մոնպառնասի»
«ազատ ակադեմիաները»։ Յաղ-
թահարելով բազմաթիւ դժուա-
րութիւններ, հասել է արուեստի
ամենամեծ բարձունքներին, հա-
շալի տիրապետել է մայրենի լե-
զուն՝ երբեք չկարուելով իր հայ-
կական արժանականությոց։

Ստեղծել է նատիւրմոռթներ, դիմանկարներ, բնանկարներ, աշխատակցել զանազան թերթերի ու ածսագրերի, կատարել է մի շարք գրքերի նկարագարդումներ:

Երեք անգամ արժանացել է
Հայլմարկի մրցանակին, «Ի դը
Ֆրանս», ճարոնի ազգային կրթու-
թեան եւ «Եւրոպա» մեծ մրցանակ-
ներին եւ այլն:

Ցուցահանդէմներ է կազմա-
կերպել աշխարհի տարբեր երկր-
ներում եւ ամէնուր ունեցել շոնդա-
լից յաջողութիւն։ Մեծ համբաւ է
վայելել որպէս բեմանկարիչ, ստեղ-
ծել է նաև գունաւոր վիմագրու-
թիւններ եւ դեկորատիւ խեցեգոր-
ծական աշխատանքներ։

1976թ. Ֆրանսական կառավարութիւնը որպէս գրոշմանիշ թողարկում է Գառզուի ստեղծագործութիւններից մէկը, եզակի պարզեւ՝ ինչին աշխարհահռչակ քիչ նկարիչներ են արժանացել իրենց կենդամնութեան օրօք:

1978 թ. Գառզուն ընտրուում է
Ֆրանսացի Գեղարուեստի Ակադեմ-
իայի իսկական անդամ:

Ֆրանսացի կառավարութիւնը
1986 թ. Յուլիսի 13ին արժանին
մատուցելով վաստակաշատ ար-
ուեստագիտին, Վիլենիովների
դղեակը պաշտօնապէս բացում է
որպէս Գառզուի աշխատանքների
թանգարան:

Սփիւռքահայ արուեստագիտ-ներից առաջինն էր, որին 1981 թ. շնորհւում է Հայաստանի Նկարիչ-ների Միութեան «Մարտիրոս Սար-եան» մրցանակը; Իսկ ծննդեան 80-ամեակի կապակցութեամբ, ՀԱՍՀ Գերագույն Խորհրդի նախագահու-

թեան 1986 թ. Դեկտեմբեր 31ի
հրամանագրով Գառզուն պարգե-
ւատրւում է պատուոյ գրով։
Արդէն իսկ ողջ աշխարհում
ճանաչում վայելած տաղանդաւոր,
անզուգական Գառզուի համար
առանձնակի նշանակութիւն ունէր
իր հայրենիքում ընդունուելու եւ
մեծարուելու իրողութիւնը։ Աշ-
խարհի բազմաթիւ երկրներում՝
Ճապոնիայում, Գերմանիայում եւ
այլուր իր եզակի, ուրոյն արուես-
տը ցուցադրելն ու անժիստելիօրէն

դուն: Մայրենի լեզուին հիանալի տիրապետելուց զատ զարմանում ես նաեւ նրա գրելաձեւի, ձեռագրի իւրօրինակութեամբ: Առաջին հայեացքից թւում է, թէ ձեռագիրն անընթեռնելի է ու բարդ, սակայն

իր արուեստի գործերի նման նրանք

նէ, որ իմ յարաբերութիւններս
հայրենիքին հետ ըլլան ուղղակի եւ
պաշտօնական...»:

Այս նամակը մեծ աշխուժութիւն է առաջացնում հայ կերպարութեատրադիտների շրջանում եւ անշուշտ հայրենիքը անհամբեր սպասում էր իր բացառիկ տաղանդով շնորհուած արուեստագիտին, ինչի մասին է վկացում Վ. Համազարամարեանի Գառզուին յղուած նամակը. «Սիրելի Գառզու, աւանց սպասելու իմ նախորդ նամակի պատասխանին, ուրաքիութեամբ պիտի յայտնեմ, որ Հայաստանի կառավարութիւնը պաշտօնական որոշում ընդունեց հրամիրելու Ձեզ եւ Երեւանում կազմակերպելու Ձեր ստեղծագործութիւնների ցուցահանդէսը»:

Գառզուն ի հարկի ջերմութեամքը է ընդունում հրաւէրը.
«Սիրելի եւ շատ յարգելի բարեկամ, Հայաստանի պաշտօնական հրաւէրը մեղի շատ մեծ հաճոյք պատճառեց եւ որքան երջանիկ պիտի ըլլաք, որ մեր սիրելի Հայաստանը տեսնելու մեր երազը վերջապէս իրականութիւն պիտի դառնայ: Հաճեցէք մեր ջերմ շնորհակարութիւնը յայտնել Հայաստանի կառավարութեան Սփիւրքի հետ մշակութային կապի կոմիտէին անդամներուն...»:

1966 թ. Հոկտեմբերին Երեւանում բացվում է Գառագուի գրաֆիկական գործերի ցուցահանդեսը, որի բացմանը նրա լաւագոյն բարեկամ, Հիմնադրության նկարիչ Մհեր Աբեղեանը իր խօսքում մեծապէս գնահատուելով ժամանակի մեծագոյն արուեստագէտի ստեղծագործութիւնները, նշելով դրանց միջոցով Գառագուի՝ դիտողին իր հարուստ հոգեկան աշխարհը, մտքերն ու լոյզերը հաղորդելու կարողութիւնը, նրա խորը մարդկային արուեստը, ասում է. «...Միրելի Գառագու, Դուք շատ երկրներում էք ցուցադրել Ձեր տաղանդաւոր ստեղծագործութիւնները: Աշխարհի տարբեր ժողովուրդներ, եւ առաջին հերթին ֆրանսական ժողովուրդը, որի հետ ապրում եւ ստեղծագործում էք աւելի քան քառասուն տարի, բազմաթիւ անգամներ ունինդրել է Ձեր ստեղծած ինքնատիպ արուեստը: Շատ անգամներ են ստեղծուել արուեստի կամուրջներ, որի միջոցով դուք հաղորդել էք Ձեր հարուստ հոգեկան աշխարհը, Ձեր մտքերն ու լոյզերը դիտողին:

Նուքանու ու յոցպարլը դիտովա։
Շատ ժողովուրդների արուես-
տասէր ներկայացուցիչներ ասացել
են այն բարձր էսթետիկական հա-
ճուքը, այն գեղեցիկի զգացումը, որը
տալիս է դիտողին Ձեր արուեստը,
որը կոչւում է Գաւագովի արուեստա։»։

Հայաստան կասորած իր առա-
ջին այցելութիւնից Գառզուն Փա-
րիզ է վերադառնում հարուստ
տպաւրութիւններով, այն նոր լիցք
ու թափ է հաղորդում նրան՝ իր
կտաւններում պատկերելու հայրենի
ընաշխարհի գեղեցկութիւնները;
Միաժամանակ նա հպարտանում է

իր հայրենիքի զարգացման հեռանկարներով, ինչի մասին գորովանքով գրում է. «...Միշտ Հայաստանի կարօտը կը քաշենք: Միշտ

卷之二

**Ձեր ծանուցումները Վատահեցք
«Մասիս» Շաբաթաթերթին**
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ԱՅԺՄԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ

ԳԱԶԱՆՑ ԿԸ ՍՈՆՉԵ ՄԱՐԴՈՒ ՄԵԶ

ՎԱՐԴԱՆ Ա. ՔՃԱ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ

Ոչ մէկ հակառակորդ, այնքան սարսափազգու չէ, որքան, որ դարանակալ քու մէջդ կը գործէ:

Այն ներքին ոխակալ թշնամին, չի խնացեր, ո՞չ հարազատի կեանքին, ո՞չ ուրիշին եւ ոչ ալ ինքինքին:

Գլուխը երկու ձեռքերուն մէջ առած կը մտածէ, կը ծրագրէ ու կ'որոշէ. թէ ի՞նչ մեծ նպատակներ ի կատար պիտի հանէ:

Երեւակայութիւնը հրավառ՝ կ'երագէ արեւափառ գագաթներ նուածել, իր իտէալին հետ սերուցէն կ'ագուցուի ու կ'ըլլայ միակտուր ամբողջութիւն մը:

Հազիւ քանի մը քայլ կը յառաջանայ ու կը յառաջադիմէ, յանկարծ կը կամի ու չի հասկնար, թէ ուրկէ՞ եւ ի՞նչպէս կամկածը կը սողոսկի զգայարանքներուն մէջ ու հիասթափութեան կը մատնուի:

Կը լսէ իր ներքին լսողութիւնը թմբկահարող խժալուր փափսուքներ, որ կ'ապագինեն ու կը բեկանեն իր սլացքին թեւերը ու կը սպառեն իր խանդական տկարութիւններէն եւ կուտակուած մեղքերէն:

Հաւատա՛, հայրենասէր հայորդի, սա անժխտելի ճշմարտութեան, թէ հոգեկան բերդիդ ամրութիւնները դիւրին չեն խորտակիր, եթէ ատոնց արձատները ճիւղաւորուած ու հաստատուած են երկնային տարածքներուն վրայ:

Մ'ի մոռանայ, որ ամէն թշնամի, ճակատամարտը վճռական շահելու համար, նկատի կ'առնէ երկու ազդակներ, որոնք յաղթութիւնը կ'երաշխաւորին: Մէկը իր գօրութիւնն է եւ միւսը, հակառակորդին տկարութիւնը: Վճռական դեր մը վերապահուած է, թէ մէկուն եւ թէ միւսին ճակատամարտը շահելու կամ կորմունելու:

Ալ կը դառնայ ամոր մշտնջենական կալանաւորը, ենթակայ ամենօրեայ կարծը մտրակուներու:

Կ'ըսէ,

-Դուն այն մարդը չես, որ կրնաս տարակուածի յաղթանակներ շահիլ ու երկնամերձ բարձունքներու վրայ ճառագայթել:

Ինքնակործանումը, որ կուզայ ներմէդ, առաւել աղետալի է, քան դուրսէն եկած պատուհաս:

Երբ դուն ներքին կամեցողութեամբ կը ստեղծես դժբախտութիւնդ, անհամեմատելի է, ուրիշին պատճառած չարիքին հետ:

Արտաքին թշնամին շատ դիւրին կրնաս նկատել, լրտեսել ու յաղթահարել, բայց ներքինը որ որջացած է հոգիիդ յատակը գաղան մըն է, որ անզուսպ է, քեզ կը մղէ մահացու փորձութիւններու մէջ կեանքը վտանգելու:

Ֆողովրդային իմաստութիւնը կ'ըսէ շատ յատակ, թէ մարդուն կործանումը կուգայ իր ներքին բարոյական տկարութիւններէն եւ կուտակուած մեղքերէն:

Հաւատա՛, հայրենասէր հայորդի, սա անժխտելի ճշմարտութեան, թէ հոգեկան բերդիդ ամրութիւնները դիւրին չեն խորտակիր, եթէ ատոնց արձատները ճիւղաւորուած ու հաստատուած են երկնային տարածքներուն վրայ:

Մ'ի մոռանայ, որ ամէն թշնամի, ճակատամարտը վճռական շահելու համար, նկատի կ'առնէ երկու ազդակներ, որոնք յաղթութիւնը կ'երաշխաւորին: Մէկը իր գօրութիւնն է եւ միւսը, հակառակորդին տկարութիւնը: Վճռական դեր մը վերապահուած է, թէ մէկուն եւ թէ միւսին ճակատամարտը շահելու կամ կորմունելու:

Մարդ երբ չի վախենար իր ինքնութենէն, իր ներքին տկարու-

թիւններէն, իր անաստուածութենէն եւ իր հոգիին ամայութենէն, պէտք է գլուխը առնէ երկու ձեռքերուն մէջ ու աղաւաղէ իր ճակատակիրը:

Իրականութիւնը այսպէս ըլլալով, հասեր ենք տեղ մը ու կը հարցնենք, թէ ո՞ւր կ'ուզէ հասնիլ հոգեւոր արժէքները միատեղ ըմբոս մարդը, որ իր մեղապարտ կենցաղով կը փութացնէ իր ինքնակործանումը: Երբ կը պայքարիս Աստուծոյ գոյութեան դէմք աղաւաղէն եւ դուն քեզ պիտի պատուհասնես եսակերուն մաքառումներով:

Երբ ատելավառ պայքարը իտէալ կ'ընես եւ ատով կը ջանաս արմատախիլ ընել, ամէն ինչ որ առաքինութիւն կը բուրէ, ալ դժուար է, որ պարկեցտ մարդիկ կերպարիդ վրայ տեսնեն Աստուծոյ ձեռքով ստեղծուած բանաւոր արարածը:

Ե՞րբ պիտի հասկանան այս մոլորակը, որ ատանց Աւետարանի հաւատաքին, ոչինչ են, ոչինչ ունին եւ ոչինչ կ'արժէն:

Իրենց ամբողջ կեանքի տեւողութեան պարապ թիթեղներու պէս պիտի փայլին ու փայլին, բայց հասարակութիւնը երբեք պիտի չլսէ ու պիտի պատուէ զիրենք:

* * *

Ժամանակի պահանջներու ձնշումներէն պարտադրուած մէծ թիւով երիտասարդութիւնը պէս պիտի փայլին ու փայլին, բայց հասարակութիւնը ինչո՞ւ կ'ուզնէ հակասութիւններով ապրիլ ու դառնայն կեանքը, որ ծերութեան հանդրուանին չհասած, վաղաժամ փութացնեն իրենց վախճանը:

Ի՞նչպէս կարելի է, այս նորատի հոգիներուն մէջ Աստուծոյ խօսքը ներմուծել ու երկինքը բանալ անոնց կեանքին վերեւ աստուածային պայտապատճեամբ, որ զգուշանան մեղքի ճանապարհէն քալիկ ու ընտրել այն ճամբան, որ Փրկչին քալած յարութեան ծալ-

Շար.թ էջ 18



COME IN AND
ENJOY
OUR PATIO
AND THE
FINEST
SHISHA
“HOOKAH”

CATERING FOR ALL OCCASION

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



MOUHAMAD SALEM
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641



BELLY~DANCING

ՄԻ ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ծարունակուածէց 13-էն

Էք անել տրամաբանութիւնն ու
ազատատենչութիւնը 21րդ դարում
ձեր գործերի նախապայմանը դարձ-
նելով՝ Փան-Թուրքիզմը մի կողմ
դրէք: Անցան այն օրերը որ ժամա-
նակի բռնակալներն ու զօրբաները
ունքի մի շարժումով ինչ որ ուղղում
էին իրենց ստրկամիտ գործակալնե-
րը անվերապահ կատարում էին:
Հիմա խալիֆայի ունքի շարժումով
կամ բէկերի գոռոտմագրչիւնով չի
կարելի ժողովրդից տուն խլել կամ
աւերել հենց իր գլխին, այսօր
մշակովմների բանակցութեան ուազ-
մավարութիւնն է պէտք:

Պրն. վարչապետ երբեմն որ ձեզ տեսնում եմ ձեր գլխաչորով կողակցի հետ պաշտօնական նիստերում կամ որեւէ կառուցյի բացման հանդէսում, խաղաղ ու ժամանէց երլցիթ էք ունենում, ուրախանում եմ ինքս ինձ ասում եմ երանի հնարաւոր լինէր գայի ձեզ մօտ եւ ինդրէի ձեզանից որ դուք այսքան ազատամիտ ու աստուածավախ էք մեր հողերը մեզ վերադարձրէք: Միթէ՞ ըոլոր կրօններում յատկապէս իսլամում, սուրբ գիրք ունեցող հաւատացեալի ունեցուած քը յափշտակելն ու տիրանալը «Հարամ» չի համարւում: Որքան ցանկալի է որ այս բարի գործը ձեր ձեռքով կատարուի: Իսկ երբ լրագրերում կարդացի եւ լուրերի մէջ լսեցի որ ձեր պետութիւնը Ախթամար եկեղեցու նորոգման համար միլիոն ու կէս տոլար յատկացում է արել, ուրախութեանս չափ չկար, մտածում էի այս մարդկացին եւ քաղաքակիրթարարքի համար՝ խաղաղութեան մրցանակի պիտի արժանացնեն ձեզ, մտածում էի 1100 տարուայ հինաւուրց եկեղեցու գանգերը մէկ դար լոելուց յետոյ պիտի զողանձեն եւ Քրիստոսի մարգարէական պատգամը կը լսուի եւ թշնամութիւնները կը փոխարինուի բարեկամութեամբ, երանի ես էլ այդ պատմական հանդիսութեան մասնակիցներից լինէի, քիչ-քիչ պղտորուած սիրաս ու հոգիս պարզուում էր, ինքս ինձ յոյս էի տալիս թէ «Կորսուած Յովսէփը տուն կը վերադառնայ, մի տիրորի»: Վաստա՞ էի որ հրամիրեալների առաջին շարքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Գարեգին Բ.ը եւ ուրիշ կաթողիկոսներ, քրիստոնեայ եւ իսլամ հոգեւորականներ եւ երկու երկրների մեծերը պէտք է միատեղ ներկայ լինէին եւ այնժամ ձեր սահուն ու պարզ խօսքերով, հայերից ներողութիւն ինսդրելուց յետոյ, հոգեւոր հանդիսութիւնը սկսուելով անցեալի եւ ներկայի բռնակալ իշխանաւորների ներում կը շնորհուի:

Պրն. Վարչապետ դուք «Արդարութիւն» կուսակցութեան նախագահն էք եւ գիտեմ որ հոգեւոր ու կրօնական հակումներ ունէք եւ ձեր կուսակցութեան անունն էլ անտեղի չի ընտրուած։ Արդարութիւն՝ (Աստուած արդար է) բարձրեալի բարձրագոյն յատկութիւններից մէկն է, եւ արդարադասութիւնը Աստծոյ պատուիրաններից է, դուք որպէս հաւատացեալ անձնաւորութիւն որը արժանացել է այդ քաղաքական բարձր պաշտօնին, կարող էք քաղաքակրթութեան իրաւունքների առաջնորդների պէս (անուն չեմ տալիս) որոշում կայացնէք եւ ձեր երկրում շահագործուած ու կեղեքուած մարդկանց իրաւունքները վերականգնէք, միթէ Կարս, Արտահան, Էրզրում, Վան եւ Վանայ լիճ, Ախթամար կղզին (ոչ թէ Աղդամար)

Սուրբ Խաչ եկեղեցիով որը գնահատուել եւ նորոգուել է, հայքին չի պատկանում: Ինչո՞ւ այնքան քարոզութիւնից եւ աչքառու ծախսերից յետոյ «Աղդամար» անունով թանգարանի բացում կատարուեց: Աստծուց, որ պաշտում էք, չվախեցաք, որ իր Յիսուսի Քրիստոս մարդարէին այսպէս անտեսեցիք: Արդեօք կարելի է մի պետական մարդու կարգադրութեամբ պատմական այս պարզ ճշմարտութիւնը այսքան հանգիստ փոխել: Խաչը գմբէթից, հոգեւոր պատգամները պատերից, Յիսուս խաչուած պատկերը Աստծու տնից հեռացնելով, հաւասարացեալներին իրենց աղօթատեղից զրկելով եւ թանգարանի վերածելով, արդեօք մարդկանց կարողացաք խաբել: Հազար հարիւր տարուայ հնութիւն ներկայացնող եկեղեցին ծանր ու բարձր ծախսերով նորոգուեց եւ Աղդամար թանգարան զարձաւ, որ ի՞նչ: Անյարարի անուն Սուրբ Խաչի փոխարէն Աղդամար եւ աւելի նսենցացնելու համար նկարներով ու դրոշակներով զարդարուեց: Եկեղեցի որ իր տեսքն ու կառույցը դարերի ընթացքում ոչինչ չի փոխուել ինչպէ՞ս կը վերածուի թանգարանի: Կարծում էք խաչը գմբէթից պոկելով, դուռ ու պատ ներկելով եկեղեցին իր որպիտութիւնը ձեռքից կը տա՞յ: Արդեօք, Այս Սովիա եկեղեցին որ մզկիթի է վերածուել, թուրիստների համար ընդունելի է:

Եպկազցրս որ Աստծու տուսածի թէ կարելի է 1100 տարուայ նրա ամուլը հիմնաքարը, որ հաւատացեալ մարդկանց հաւատամ քններից է, ինչ որ հրամանով կեղծել, եւ խաչը որ քրիստոնէութեան եւ քրիստոնեանների փրկութեան խորհրդանշիշն է, եկեղեցու գմբէթից պոլկելորպէսպի զրկուի իր իրական ու հոգեւոր էութիւնից: Եւ յետոյ էլ Աստուած գիտի հրեշտակի արձան թէ սատանայակերպ տիպար զետեղուի:

Պրն. վարչապետ միթէօ հնա-
րաւոր է Վանաց լճի եւ Ախիթամար
կղզու որպիսութիւնը փոխել, դրանց
արմատները պատմութեան խոր-
քումն են, արդեօ՞ք կարելի է Արա-
րաւոր Աղրիդադ անուանել:

**Զգիտեմ Պղն. Վարչապետ ինչ-
պէ՞ս էք ուզում պատժական ճշմար-
տութիւնները ինչոր յերիւրանքնե-
րով ծածկել: Երեւի յետագայում կը
փորձէք Վանաս լիի անունը փոխել,
որը դժբախտաբար բազում նահա-
տակնեոն ունեածան ու առնձաւ:**

ՎԵՐԺԱՎԻԿԱ ԻՆՑ ԱՍԵՑ, ՊՐՆ.

Հրատողան ձեր ելոցթների մէջ յա-
ճախ հոլոքոստի մասին ճշմարտու-
թիւններ էք պարզաբանում, Հիթլե-
րի եւ վեց միլիոն հրեաների բնածնջ-
ման մասին խօսելիս ոճրագործու-
թիւն էք անուանում, ի՞նչ տարբե-
րութիւն հոլոքոստի եւ ցեղասպա-
նութեան մէջ, եւ ձեր երկրի պետու-
թիւնը 92 տարի առաջ, առաջին
համաշխարհային պատերազմի ըն-
թացքին (որ դժբախտաբար դուք
սերտ կապեր ունէիք Գերմանիայի
հետ) հայերին իրենց տան մէջ իրենց
Հայրենիքում՝ Արեւմտեան Հայաս-
տան ում ոչնչացրիք, մինչդեռ հրեա-
ների հոլոքոստը Եւրոպայում՝ օտար
հողի վրայ (Երկրորդ համաշխար-
հային պատերազմի ընթացքում)
կատարուեա:

Պրմ. վարչապետ արդեօ՞ք
ասսածս ճշմարտութիւն չի: Պրմ.
էրտողան արդարութեամբ դատէք
Ասսուած միշտ ներկայ է զիտե՞ծ
ասսուածապաշտ էք, եկէ՞ք եւ իրա-
կանութիւնը ընդունէ՞ք ոչ միայն
Ախթամարի «Աղդամար»ի Սուրբ

ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Տարութակուածէզ 5-է՛Շ

Կողակիցը՝ Կիպրոսի Մելիքեան-
Ուզունեան ազգային նախակրթա-
րաններու նախկին երախտաշատ-
տնօրէն Սեղբակ Կէպէնլեանի): Տի-
կին Կէպէնլեանի ուսանողութեան
շրջանին, Պոլսոց Դպրոցաէր Տիկ-
նանց Վարժարանին մէջ, ընդհա-
նուր աշակերտութեան ու երիտա-
սարդութեան պաշտամունքի կուռքն
էր «Սկիւտարի Սոխակ»-ը՝ Պետ-
րոս Դուրեան, որ իբրև տարա-
բախտ ու վաղամեռիկ հզօր բա-
նաստեղծ արժանացեր էր փառա-
շութ, բայց սրտայուզ աննախադէպա-
յուղարկաւորութեան մը: Այս հմայ-
քին ներքեւ տիկին Կէպէնլեան ու-
իր գրամեղանակից դասընկերու-
հին, երկու պատանի աղջնակներ,
յուղիչ միամտութեանմը մը կ'որո-
շեն Պետրոս Դուրեանին նմանիլ ու
անոր օրինակով բանաստեղծ դառ-
նալ՝ անօթի մնալէ ետք թոքախտ
ըլլալով: Զորս օր ոչինչ կ'ուտեն:
Բայց, անշուշտ, բանաստեղծ չեն
ըլլար:

Մւր էր թէ ներկայիս Սփիլու-
քի մէջ ունենացինք հայ բանաս-
տեղծութեան ու հայ դպրութեան
նկատմամբ Պոլասոյ այդ օրերուն
տիրող հմացքին միացն մէկ կոտո-
րակը:

Վիճակագրութեան մը համա-
ձայն, այսօր Սփիլոքի հայ պատո-
նիներու ծիայն 10 առ հարիւրն է
որ հայկական դպրոց կը յաճախէ
(Հ.Բ.Լ.Մ. Կեղր. Վարչ. Ժողով,
2004, Մարտ 16, տեսմել «Հայ-
կեանք», 2004, Մարտ 25, էջ 6):
Այսինքն մեր պատանիներուն 90
առ հարիւրը կը թակէ օտար վար-
ժարաններու դուռը: Յեղասպա-
նութեան գեհենէն անցած ու վե-
րապրած մեր ժողովուրդին վայել-
է այս իրողութիւնը: Ազգալին ձա-
խողութեան համազօր չէ՞ այս կա-
ցութիւնը, որ եթէ այս ձեւով
ընթանայ պիտի նշանակէ ցեղաս-
պանութեան շարունակութիւն: Իսկ
մենք... հատուցում կը պահան-
ջենք:

Մեծ Ոճիրի հարիւրամենակի վերջին տասնամենակին այլեւս ակն-կալելի է, որ մեր ազգային ղեկավարները իրենց անձնական օրինակով ու գործով ջանան կեցնելու ազգային այս տեղատուութիւնը: Նոր շունչով ու նոր ոգեւորութեամբ պէտք է վերաստեղծուի ու վերարձարձուի մեր մէջ յարգանքը մեր ազգային արժէքներուն նկատմամբ: Մեր ժողովուրդը ընդդամրապէս կը սիրէ Հետեւիլ նորու-

Իաչ եկեղեցու ոսկի բանալին այլ
Արեւմտեան Հայաստանի՝ որ տարի-
ներ ձեր յափշտակութեան մէջ է
զմոնուում հայ ժողովրդին՝ Արմէննե-
րին յանձնէք եւ ինչպէս հրեաց
ժողովրդին էք պաշտպանում, որը
շատ տեղին է, հայ ժողովրդին էլ
իրաւացիօրէն պաշտպան համդիսա-
ցէք: Երկու ժողովրդների բնաջնջ-
ման փորձը 20րդ դարում կատար-
ուեց, երկուսն էլ մէկ Աստծու ատեղ-
ծածն են, երկուսի արիւնն էլ կար-
միր է, երկու ժողովուրդ որ ունեն
հնագոյն պատմութիւն եւ իւրայա-
տուկ հաւատամք, բնաջնջուեցին
ոճրագործների ձեռքով: Բայց երբ
մարդ արտասում է մարդկացին
կորուսաի համար, երկու աչքից է
արցունք հոսում ոչ թէ մէկ աչքից:

Յարգելի Պրն. վարչապետ երբ
նամակս վերջացնում էի, մի նորու-
թիւն լսեցի, չէի ուզում հաւատալ
բայց յաջորդ օրը Լոս Անձելոսում
հրատարակուող թերթերից մէկում

թեանց եւ հօտը յաճախ կ'ընթանայ
իր հովիւներուն ճանապարհէն: Ի
պատուի պէտք է ըլլան վերակեն-
սաւորուած հայ դպրոցն ու մեսրո-
պաշունչ մաքուր հայերէնը: Ինչո՞ւ
չսկսի արշաւ բանալու ցանց մը՝
այլեսերումի դէմ հզօրագոյն ամ-
րոց հայ դպրոցներու, բանալու
մանաւանդ Մելգոնեան կրթական
Հաստատութեան նման մի քանի
գիշերօթիկ վարժարաններ՝ մեր
նոր սերունդներուն տալու հայեցի
համապարփակ կրթութիւն:

ՄԵՐ պատմութեան համար
մռայլ ու մութ էին Դ. դարու
վերջին տարիները: Սակայն չնոր-
հիւ մի քանի տեսիլք ունեցող,
հեռատես, անձնուէր ու խիզախ
առաջնորդներու, մեր Ե. դարը
եղաւ մեր Ռսկեղարը, եւ մեր այն
օրերու առաջնորդներուն անուն-
ները ուկի տառերով արձանագր-
ուեցան:

**Այսօր եւս մուալլ ու մութ են
մեր օրերը:** Գահավիժումի ճամ-
բուն վրայ ենք: Պէտք ունինք մեզ
ետ բերելու, նոր ուղիներ բանալու,
մեր ժողովուրդը շարժելու կարո-
ղութիւն ու հմայք ունեցող «մեծ»

Եկապարհներու։
Ցեղասպանութեան հարիւրած-
եակի վերջին տասնամեակը մեր
ժողովուրդին համար թող ըլլայ
ազգային ինքնութեան ամրապնդ-
ման, հայեցի կրթութեան տարած-
ման, ներքին հզօրացման ու հա-
մախմբումի տարիներ։ Մեր կազ-
մակերպութիւններու ու զանազան
ազգային մարմիններու ղեկավար-
ները կրնան ուղեցուց, օրինակ ու
մանաւանդ ներշնչումի աղբիւր ըլ-
լալ ու քաջալերել վերաստեղծումը
հայադրոշմ միջավայրին, ուր ի
պատուի ըլլան մեր լեզուն ու մեր
մշակոյթը։ Այս բոլորը՝ անշուշտ
առանց կղզիացումի։

Թողայս տասնամեակը ըլլայ
համապարփակ, ամբողջական պա-
հանջատիրութեան ժամանակաշր-
ջան մը: Լլանք խստաբարոյ պա-
հանջատէր: Ու նախ պահանջենք
մեզմէ ամէն մէկէն, մեր կազմա-
կերպութիւններէն ու մեր ղեկա-
վարներէն մեր պարտաւորութիւն-
ները՝ Յեղասպանութեան մեր զո-
հերուն ցիշատակին հանդէպ: Պա-
հանջենքնաեւ բռնաբարուած իրա-
ւունքները մեր նահատակներուն՝
ցեղասպան թուրքիացէն: Ամբող-
ջական ու խստաբարոյ պահանջա-
տիրութեամբ միայն կարելի պի-
տի ըլլայ վերականգնել արդարու-
թիւնը ու քաւել չարիքը Մեծ
Ոճիրին:

էլ կարդացի՞ մի խուռմք մարդիկ մի
երկրից (անուն չեմ նշում) վանում
մէկ շաբաթով հոլոքոստի վերաբեր-
եալ վաւերական փաստարկութեան
ցուցահանդէս են կազմակերպելու։
Զարմացաց չէի հաւատում, վանում
մէկ շաբաթով հոլոքոստի ցուցա-
հանդէս, ինչո՞ւ։ Ինչո՞ւ վանում՝
իրենց տնում որ Սուրբ Խաչ եկեղե-
ցին էլ այնտեղ է ինչո՞ւ հայերի
ցեղասպանութեան թանգարան, ցու-
ցահանդէս չի կազմուում։ Ինչո՞ւ Պրն.
վարչապետ ցաւում եմ, չփիտեմ այս
դառը իրողութիւնը ինչպէ՞ս արտա-
յացեմ։ Պրն. վարչապետ կարդացէք
եւ դատէք, ցոյսով եմ ձեր կարծիքի
ու որոշման ողջամտութեամս վարձքը
Աստծու խոստացած դրախտին ար-
ժանանաց։ Տողերս վերջացնում եմ
մեծն Սաադիի երկողով։

Եթէ մարդոց մնայ բարի անուն
միշտակ,

Վարձքն աւելին է, քան թէ ոսկէ
ապարանք։

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹԲՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ֆութպոլի առաջնութեան 5-րդ հանգրուանի մրցուաներուն արդիւնքները
Բանանց - Արարատ 1-0
Միկա - Ուլիս 7-0
Փունիկ - Գանձասար 1-0
Շիրակ - Կիլիկիա 0-1

Խումբերու դասաւորումը						
Խող	Ցաղթ.	Հաւս.	Պարտ.	Կու	Միաւոր	
1. Փունիկ	5	4	1	0	9-1	13
2. Միկա	5	3	1	1	13-4	10
3. Բանանց	5	2	2	1	5-3	8
4. Գանձասար	5	2	2	1	3-1	8
5. Արարատ	5	2	1	2	6-2	7
6. Կիլիկիա	5	1	1	3	2-9	4
7. Ուլիս	5	1	0	4	2-16	3
8. Շիրակ	5	0	2	3	1-5	2

ԲԱՆԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹԲՈԼԻ ԳԱՒԹԱԿԻՐ

Ֆութպոլի Հայաստանի գաւաթի 2007թ. խաղարկութեան յաղթող դարձաւ Երևանի Բանանցը: Եզրափակիչում Բանանցի ֆութպոլիստները 3:1 հաշով առավելութեան հասան Արարատի նկատմամբ:

Հանդիպումը անցաւ բաւական լարուած պայքարում եւ մրցաւար Կարեն Նալպանտեանը ստիպուած էր խաղաղաշտից հեռացնել միանգամից 3 ֆութպոլիստների, որոնցից 2-ը Արարատից էին: Հիմնական ժամանակում թիմերը 1-ական անգամ գրառուեցին միմյանց դարպասը եւ մրցումը աւարտուեց 1:1 հաշով: Լրացուցիչ 30 րոպեների ընթացքում Բանանցը 2 անպասխան գնդակ ուղարկեց Արարատի դարպասը, որը արդեն հանդես էր գալիս 10 խաղացողով: Այսպիսով Բանանցը 15 տարի անց կրկին նուաճեց Հայաստանի գաւաթը:

ՈՍԿԵՐԻՉԻ ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ

Ֆրեզնոյի մէջ, 880sf 35 տար. պիզնէս, լաւ եկամծուտ, բանուկ shopping center, բոլոր յարմարութիւնները ներառեալ: Ցակոր՝ 559-224-7051/559-313-0146:

ՈՒՃԱՂՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք օանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեու Տակուանութեան համար Ա. Խոսելու Հրաւիրեց Կիպրոսի Հանրապետութեան խորհրդարանի այժմու նախագահը որ, ջերմ ծափողջոններու տակ, բարձրացաւ բեմ:

Պրն. Խրիստոփիաս կարեւութեամբ ընդգծեց թէ Հայկական Յեղասպանութիւնը ոչ միայն հայ ազգի, այլ համայն մարդկութեան դէմ գործուած ոճիր էր: Հետեւար, պատմական այդ անժիստելի յանցագործութիւնը պաշտօնապէս չհանչնալը, չդաստապարտելը եւ չպատժելը, առիթ կը հայթայթեն անոր կրկնութեան եւ պատմութեան ժամանութ տիտուր հետեւանքներուն:

Խորհրդարանի նախագահը իր ելոյթը եզրափակեց, յայտարարելով թէ Կիպրոսի իշխանութիւնները ոչ մէկ ճիգ պիտի ինայէն, հայ ժողովուրդին հետ ձեռք-ձեռքի, հետապնդելու համար Հայկական Յեղասպանութեան համաշխարհին, համանելու համար արդարութեան յաղթանակին:

Մէծ Երեսնի ոգեկոչման հայկական քաղաքական կուսակցութիւններու միասնաբար կազմակերպած միջոցառումներու շարքը, լայն արձագանգ գտաւ Կիպրոսի մամուլի էջերէն, պատկերասիրուող յայտագիրներէն:

Ճեռնութիւնները, գործնականորէն եւ անգամ մը եւս եկան հաստատելու թէ Հայ Դատապնդման ի ինուն Սփիտուքի հայկական քաղաքական կուսակցութիւնները միաւուած ճիգերով եւ վայրի լուծուած էին միանդին անմեղ նահատակներու անմուաց յիշատակին: Սրբազն Հօր ազգայնացունչ քարոզին յաջորդեց Հոգեհանգստեան Պաշտօն:

Երեք ապրիլի 24, 2007-ի առաւատեան, Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագի յատուկ արարողութիւն, Հայկական Յեղասպանութեան աւելի քան մէկ ու կէս միլիոն անմեղ նահատակներու անմուաց յիշատակին: Սրբազն Հօր ազգայնացունչ քարոզին յաջորդեց Հոգեհանգստեան Պաշտօն:

Իբրև վերահաստատում Կիպրոսի ժողովուրդին Հայկական Պահանջատիրութեան նկատմամբ ունեցած վաւերական կարեկցութեան, Հանրապետութեան Խորհրդարանը, շարունակելով տարիներ առաջ հաստատուած գուտեպնդիչ իր կեցուածքը, Հինգչաբարթի, 26 Ապրիլին գումարած պաշտօնական նիստին սկիզբը, վերստին, պաշտօնապէս ողեկոչեց Հայկական Յեղասպանութեան անմեղ գուներու յիշատակը:

Առ այդ, Յեղասպանութեան համաշխարհային ճանաչումը պահանջող եւ Հայկական Դատապնդման անժամկետ թիւնը լունեցաւ Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահմետեան, արժանանալով խորհրդարանական ներու միահամուռ գնահատանքին:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆութպոլի առաջնութեան 33-րդ համգրուանի մրցումներուն արդիւնքները

Տորթումուտ - Շալք-04	2-0	Քոբայիս - Պայերն Սիւնիխ	0-3
Արմ. Պիլցէլտ - Շանովը-96	3-1	ՎՖԼ Պոխում - Շթութգարթ	2-3
Վարտուր Պույմըն - Այնք. Ֆրանքֆորթ	1-2	Ասխըն - Վոլսպուրկ	2-2
Շերթա Պերլին - Պ. Լիվերբուրգը	2-3	ՖՍՎ Մայնց - Սէնշընկլատպախ	3-0
Նիւրեմարկ - Շամպուրկ		Նիւրեմարկ - Շամպուրկ	0-2

ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Տորթումուտ - Շալք-04	33	20	7	6	59-36	67
Վարտուր Պույմըն	33	20	5	8	51-31	65
Վարտուր Պույմըն	33	19	6	8	74-40	63
Պայերն Սիւնիխ	33	17	6	10	50-38	57
Պ. Լիվերբուրգը	33	14	6	13	52-48	48
Նիւրեմարկ	33	10	15	8	40-32	45
Տորթումուտ	33	12	8	13	40-41	44

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան 36-րդ համգրուանի մրցումներուն արդիւնքները

Սոշո - Մոնաքո	2-1	Նիս - Փարիզ Սեն Ժերմէն	1-0
Վալայ-Էտ-Մարտին	1-0	Թրուա - Ռընէ	2-2
Մարսել - Նանսի	2-1	Լորիան - Օքսէո	2-1
Լիլ - Սըտան	2-1	Պորտո - Նանք	0-1
Լիոն - Լանս	3-0	Թուլուզ - Լը Մանս	0-1

ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Արաբանիայի ֆութպոլի առաջնութեան 34-րդ համգրուանի մրցումներուն արդիւնքները

Ուէալ Մատրիտ - Եսփանիոլ	4-3	Պարտելոնա - Ուէալ Պաթիս	1-1
Սելիլա - Շուէլվա	2-1	Ռասինկ - Մայորքա	0-2
Սելբա Վիկո - Լեվամթէ	1-2	Վալենսիա - Սարակ	

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՅԵԱՆԻ մահուան առթիւ կատարուած են
հետեւեալ նուիրատուութիւնները Հ.Մ.Մ.ին:

Սահմանական	\$500
Տէր եւ Տիկ. Գալուստ Տէրտէրեան	\$500
Տէր եւ Տիկ. Սեղրակ Աճէմեան	\$500
Independent Volvo Services	\$300
Տէր եւ Տիկ. Վաչէ Պապիկեան	\$300
Տէր եւ Տիկ. Յարութ Տէր Դաւիթեան	\$300
Տիար Կարպիս Սակաթեան	\$250
Տէր եւ Տիկ. Հէրի Տիրամերեան	\$200
Տիար Յարութ Գալէնձեան	\$200
Տէր եւ Տիկ. Վրէժ Թոմապուլեան	\$200
Տիար Յովիկ Զիլիֆեան	\$200
Տէր եւ Տիկ. Գրիգոր Խոտանեան	\$150
Sevan Plumbing	\$100
Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան	\$100
Տէր եւ Տիկ. Աւետիս Պարսումեան	\$100
Garo's Basterma	\$100
Տէր եւ Տիկ. Սարգիս Տարվիշեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան Տէփոյեան	\$100
Տէր եւ Տիկ. Մարտիրոս Պետիքեան	\$100
Տիկ. Արտեմ Ազագեան	\$100
Տէր եւ Տիկ. Ժիրայր Պոյաճեան	\$100
Տիար Դաւիթ Գուցումճեան	\$100
Տէր եւ Տիկ. Վահէ Աջապահեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան Քէօրողլեան	\$100
Տէր եւ Տիկ. Թաղէոս Քէօրողլեան	\$100
Խաչիկ եւ Ճայրը Պաղտատլեան	\$100
Տէր եւ Տիկ. Օհաննէս Խոճիքեան	\$100
Տէր եւ Տիկ. Վահան Գազէզեան	\$100
Տիար Կարպիս Գաթարճեան	\$100
Տէր եւ Տիկ. Յակոբ Խոպոյեան	\$100
Տէր եւ Տիկ. Ռուկի Ղազարեան	\$100
Տիար Յովսէփ Աճէմեան	\$100
Տէր եւ Տիկ. Պողոս Մարգարեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան Գոճապապեան	\$100
Վիոլէթ Շիրինեան	\$100
Արաքսի Մանուկեան	\$100
Տէր եւ Տիկ. Վազգէն Պողարեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարուժան Զարքտեան	\$100
Տէր եւ Տիկ. Յակոբ Պոյաճեան	\$50
Տէր եւ Տիկ. Աւետիս Պաճախսպեան	\$50
Զարուհի Գելեստճեան	\$50
Տէր եւ Տիկ. Արմէն Գահուաթի	\$50
Սառա Սաղրեան	\$50
Մարթա եւ Ռուբիկ Գաթանճեան	\$50
Ալպերթա	\$50
Գէորգ Ճիզմէճեան	\$50
Տէր եւ Տիկ. Մանուկ Մանուկեան	\$40
Ճելմինա Եագուպեան	\$40
Մի ոմն	\$40
Ճանսպեան	\$40
Տիար Սարգիս Պետիքեան	\$40
Տէր եւ Տիկ. Միհրան եւ Հեռմին Կոստանեան	\$40
Սալբի Հաճեան	\$25
Քրիս Թութելեան	\$20
Տէր եւ Տիկ. Սարգիս Դաւիթեան	\$20
Lyn Haril	\$10
Alberta and Sardie	\$5

፩፻፲፭

Ծարունակուածէց 14-էց

կը մտածենք եւ մեծ յուղումպէլ կը
յիշենք անցեալ տարուայ մեր երջա-
նիկ եւ պայծառ օրերը զոր անցու-
ցինք Ձեզի եւ սիրելի ուրիշ բարե-
կամներու եւ արուեստագէտներու
մօտ:

... Πρφων հպարտութեամբ
միշտ մտքիս մէջ կենդանի կը
պատկերանայ մեր սիրելի մայրա-
քաղաքը եւ յաճախ կ'ըսեմ ինքս
իրեն, թէ առաջին անգամ է, որ
հայերը ունեն այսքան մեծ եւ գեղե-
ցիկ քաղաք մը իրենց պատութեան
մէջ...»:

Այն մեծ բարեկամութիւնը որ
ստեղծուել էր երկու հայ արուեստա-
գիտների՝ Գառզուի և Մհեր Աբեղ-
եանի միջեւ, շարունակուեց ու տա-
րիների հետ աւելի ամրապնդուեց ու
խորացաւ, ուղեկցելով նրանց մին-
չեւ կեանքի մայրամուտը։ Դա ակն-
յացտ է նրանց փոխադարձ նամա-
կագրութիւնից։ Իր նամակներից
մէկում Մ. Աբեղեանը գրում է. «...
Սիրելի Գառնիկ, անչափ ուրախ եմ,
որ հեռու Փարիզում ունեմ քեզ նման
ազնիւ բարեկամն ու ընկերը, մեծ
արուեստագիտն ու մեծ հոգու տէր
մարդը։ Սիշտ երախտագիտութեամբ
պիտի լիշեմ, որ քո սիրալիր եւ
անկեղծ բարեկամական հրաւէրի
չնորհիւ ես հնարաւորութիւն ունե-
ցայ մօտիկից տեսնել եւ ծանօթանալ
Փարիզին, որտեղ միայն հնարաւոր
է ճանաչել ֆրանսական մեծ ժո-
ղովրդի արուեստի հանճարը։ Ու-
րախ եմ եւ հպարտ, որ իմ գործերի
առաջին անհատական ցուցահան-
դէս Փարիզի մէջ կապուած է քո
անուան հետ, որ նա բացուեց քո
բարի օժանդակութեան չնորհիւ...»։

Ս. Աբեղեանի համար Գառզուն
ոչ միայն բարձրակարգ նկարիչ է,
այլև հիմնալիք անձնաւորութիւն.
«...Ես անշափ ուրախ եմ եւ եղջա-
նիկ, որ ինձ բախտ վիճակուեց
ծուեկեն ճանապետը ուր թէ ուսակ»

Ասալով առաջնորդ քաղաքացիության մեջ արուեստագիտի, եւ թէ մեծ հոգու տէր ազնիւ մարդու...»:
Գտազրոն եւս գնահատում է Մ.
Աբեղեանին եւ ջերմութեամբ է լցուած իր ընկերոջ հանդէպ. «..Մի-
րելի Աբեղեան, մենք միշտ կը
լիշենք եւ բնաւ չմոռնանք քեզ:
Երջանիկ եւ ուրախ օրեր էին այդ
օրերը, որ միասին եղալիքը էն ան-
ցուցինք, միշտ կը լիշեմ ամէն
դժուարութիւնները եւ ուրախ պա-
հել ցուցահանդէսիդ պատրաստու-
թեան ժամանակ, եւ ես եղայ ֆրան-
սայի մէջ քու ցուցահանդէսի կազ-
մակերպողը եւ քեզ ներկայացնողը:
Միշտ ասիկա քաղցր լիշատակ մը
ահտի մնայ իմ պատիս մէջ...

Շատ ուրախ եմ, որ կիմա լաւ
կ'աշխատիս եւ կը զգած թէ մեղի
պէս արուեստագէտներուն համար
ինչ աւելի երջանկութիւն, քան
առողջ ըլլալ եւ ստեղծագործել իր
աշխատանոցին մէջ: Երանի քեզի,
որ երջանկութիւնը ունեցար վայե-
լելով մեր գեղեցիկ Զայսառանեան
վայրերը Դիլիճան, Սեւան եւ Ծաղ-
կաձոր եւ ուրիշ գեղեցիկ լեռները եւ
ռա, տեղորո...»:

Մհեր Աբեղեանի Փարիզում ներ-
կայացրած գրաֆիկական աշխա-
տանքների ցուցահանդէսի բացման
ժամանակ Գառզուն բարձր գնահա-
տական է տալիս նրա վարպետորէն
ու խստապահանջութեամբ ստեղծ-
ուած փորագրութիւններին։ Նա մի
հետաքրքիր կապ է տեսնուած Հայստ-
անի ու Ֆրանսացի միջեւ, ինչը
զարմանալիօրէն չափազանց արդի-
ական է այժմ, երբ ֆրանսացուած
նուած է Հայստանի տասնին։ «Ու -

ըախ եծ այսօր այստեղ ընդունելու
բարեկամիս՝ Մհեր Աբեղեանին՝ Հա-
յաստանի ժողովրդական նկարչին։
Ահաւասիկ իրականացած մի բաղ-
ձանք - միացման կամը Փարիզի եւ
Երեւանի միջնեւ, արուեստի համաշ-
խարհավին մայրաքաղաքի եւ մայ-
րաքաղաքի մի հին երկրի, մեծ
մշակոյթի տէր, դարեր ի վեր մրա-
փած Անիէն ի վեր եւ յարութիւն
առած այսօր ու ճառագայթող Արա-
րատի ստորոտին...»։

Մեր ուսումնասիրած նամակի ներից վեր է յառնում 20րդ դարի տաղանդաւոր անհատակառնութիւն-ներից մէկի ու նաեւ անչափ համեստ անձնաւորութեան եւ իրեն միացն արուեստում պատկերացնող Գառզուի կերպարը։ Երբ նրան առաջարկվում է ֆրանսահայ Մշակութային Միութեան նախագահի պատուաւոր պաշտօնը, նա պատասխանում է. «... Դուն գիտես, սիրելի Համազասպեան, թէ որքան սիրտս կապուած է մեր սիրելի Հայաստանին եւ որքան մօտէն կը հետեւեմ Սփիւռքի ազգային կեանքին, եւ որքան անկեղծօրէն եւ սիրով օգտակար ըլլալու առիթներէն չեմ խուսափիր։ Շատ, չափազանց զգացուած եմ, որ այդ նախագահական մեծ պատիւը կ'ուզէք ինձ շնորհել, բայց սիրելիս, ես նկարիչ մարդ եմ, ոչ խօսելու եւ ոչ ճառարտասանելու տովորութիւն չունիմ եւ ոչ տաղանդ ժողովներու մէջ նախագահէլու, պաշտօն ստանձնելու...»։

Ապրելով ու ստեղծագործելով
ֆրանսացում, նա հաւասարապէս ե'ւ
ֆրանսացի էր, ե'ւ Հայ: Անսահման
գորովով ու նույիրուածութեամբ
լցուած լինելով իր հայրենի երկրի
նկատմամբ, նա փափաքում էր նույի-
րել իր գործերի մեծ մասը Հայա-
տանին, ինչը եւ իրականացրեց յե-
տագայում: «... Ուրախ եմ, որ հայ
ժողովուրդը եկած է եւ գնահատած
է ցուցահանդէս: Կամաց-կամ այ իմ
ամբողջ լիթոգրաֆիկական գործե-
րուս ամբողջութիւնը Հայաստանի
մէջ պիտի ըլլայ եւ անշուշտ նկար-
ներով ալ պիտի հարստացնեմ իմ
հաւաքածոն...»:

Գառզուն, այն Գառզուն, որ
կարողացաւ հիացնել ու նուածել
քմահաճ ու օտարներին ոչ հեշտու-
թեամբ ընդունող բարձրածաշակ
ֆարիզը, գրաւեց այն իր անզուզա-
կան արուեստով, եզակի տաղանդով
ու հային յատուկ յանառութեամբ ու
վճռականութեամբ։ Իր ուրոցն կտաւ-
ներով կարողացաւ նոր խօսք ասել
Ֆրանսայի նման արուեստների աս-
պարէզում նորամուծութիւններով լի
ու չզարմացող երկրում։ Կարողացաւ
իր զարմանալիօրէն ժամանակակիցց,
անկրկնելի արուեստով մնալ դասա-
կանների շառարան։

Իր ինքնատիպ արուեստով ու
անկրկն ելի ոճով մուտք գործելով
հայ ժողովրդի հոգու ամենանուրբ
ու նուիրական անկիւնները, Գառ-
զուն զարձաւ ու մնաց հայ ժողովր-
դի սիրուած արուեստագիտներից
մէկը, բազմակողմանի հետաքրք-
րութիւնների տէր նկարիչ, որ յա-
րատեւում է իբրև կախարդից իրա-
կանութեան պոէտ եւ ինչպէս իրա-
ւացիօրէն անուաննել են նրան՝ «Բա-
նասակո՞չ նկարիչների իշխան»:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

ՏԵՇՈՒՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
ԿԼԵՆՏԵՅՅԼ - ՊԸՇՊԵՆՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹ
ՀԻՍԳԵԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱԶ ՆԱԶԱՐ ԴՐԻԴ ԵԹԵՐ ՀՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
Ժամը 10:00-ից 12:00
Կլէնտէլի 26-րդ կայանից



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.



Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School



AGBU PASADENA HIGH SCHOOL

THE QUALITY AND SAFE ALTERNATIVE
FOR YOUR CHILD'S HIGH SCHOOL EDUCATION

**Registration
in Progress
2007-2008
Academic Year
Grades 9-12**

Experienced & Caring Faculty
College Preparatory Programs

AGBU HIGH SCHOOL - PASADENA

2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

For more information, campus tour
and a meeting with the Principal,
please call 626-794-0363.

DINNER DANCE AND AWARDS CEREMONY

Organized By
AGBU PASADENA GLENDALE CHAPTER
SPORTS COMMITTEE

SATURDAY, JUNE 2, 2007 - 8:00 PM

AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. Mountain Street
Pasadena, CA 91104

Entertainment
SOGHOMONIAN BAND
Featuring
TAVIT SAMUELIAN

Awards presented to
1st, 2nd, 3rd Place Winners

Funds Raised Will Benefit
Pasadena Glendale Chapter's
Athletic Programs

Donation: \$50
Athletes and Children under 12: Free

For tickets please call
the AGBU offices at (626) 794-7942

AGBU GLENDALE / PASADENA CHAPTER
YOGA YOGA YOGA YOGA YOGA YOGA
COME JOIN US IN A FUN CLASS GUARANTEED TO CHALLENGE YOUR MIND AND BODY!

Mariette is a certified hatha flow yoga instructor and a registered nurse who teaches yoga in the community and to healthcare professionals.

Yoga is a holistic practice which utilizes your body's own energy powerhouse to optimize wellness in the body and mind.
Yoga is neither a religion nor simply a "workout".

LIMITED SPACES

For Information of reservations please call A.G.B.U. office (626) 794-7942

AGBU CENTENNIAL SPONSORS



6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

